Հայոց և մատուցին զանստորագ գիրս ինչ Դատաւորաց ո-
մանց (Հէօձձէթ), որովք ջանային հաստատել որպէս թէ
Հայք պարտաւոր են հատուցանել յիւրաքանչիւր ամի 200
ոսկիս իբր վարձ Ս. Յակոբայ: Եւ 'ի լինել երբեմն հակա-
ռակութեան՝ Յոյնք պահանջեալ լիցեն 200 ոսկիս, Հայք
խոստացեալ են հատուցանել 50 ոսկի միայն՝ և զայն չեն
տուեալ, այժմ խնդրեմք ասեն զվարձս այնքան ամաց, և
այսուհետեւ ծանր գնով տամք զայն 'ի վարձու, եւ այլ
սոցին նման երազական բանք: Ընդ այս պատասխանի ե-
տուն Հայք և ասեն՝ Յոյնք ունի՞ն քան զայն մեծապայ-
ծառ և փառաւոր տեղի. ասեն, ոչ, ապա զիա՞րդ անխո-
հեմութեամբ զայնպիսի պատուական տեղի 'ի վարձու տը-
ւեալ էք, որ զՀայս իբրեւ զթշնամի ձեզ ճանաչէք, եւ
դուք նստիք յոռի և յանշուք տեղիս, և կամ ունի՞ք գիր
ինչ վկայութեան, որ երբեմն Հայք վարձս տուեալ են
ձեզ: Դատաւորք ասեն՝ ով ոք իցէ այնքան անմիտ զայն-
պիսի տեղի տալ 'ի վարձու իւրոյ թշնամւոյ, եւ այն
'ի գին անարգ. դուք այնքան ատելութեամբ վարիք ընդ
Հայս՝ մինչ ոչ կամիք բնակիլ նոցա յԵրուսաղէմ, թող թէ
զայնպիսի փառաւոր տեղի տալ 'ի բնակութիւն նոցա:
Յոյնք ետուն պատասխանի, Հայք գոլով հպատակ և հար-
կատու Տէրութեան՝ 'ի պատիւ երեսաց նորին յարգեմք
զնոսա, եւ ընդունիմք իբրեւ հիւր եւ վարձաւոր մեր:
Դատաւորք ասեն՝ ոչ ինչ է պիտոյ անհիմն և անտեղի բա-
նից ձերոց տալ պատասխանի և հաստատեցին՝ թէ վանք
Ս. Յակոբայ սեփհական է Հայոց, և բարձաւ զանուն վար-
ձու: Յոյնք ասեն՝ որովհետեւ բարձիք զայդ անուն, գը-
րեսցի ուրեմն Ս. Յակոբ վանք Վրաց՝ զի Վիրք գոլով կը-
րօնակից ինքեանց՝ լիցի առիթ ապագայ խռովութեանց,
և տիրելոյ այնմ իբրեւ սեփհականութիւն հետեւողաց իւ-
րեանց, որպէս տիրեցին բովանդակ վանօրէից և ստաց-
ուածոց Վրաց և Սերվիացւոց: Հայք ընդ այս եւս ոչ հա-
ճեցան, զի այլ է վանք Վրաց Ս. Յակոբ 'ի գաւթի Սուրբ
Յարութեան, և այլ է վանքն Հայոց. սակայն Յոյնք որ և
իցէ նենգութեամբ ետուն գրել 'ի հրովարտակին իւրեանց
որպէս զՍ. Փրկիչ և զՀրեշտակապետ, զառաջինն կոչելով
Հաշըէրէ Խանըն զընտանը, որ 'ի հրովարտակս Հայոց և ժողո-